

8542

69


արշակունյաց  
Առաջնային քառակի գործադրություն

ՆԵՐՄԵԾՈՒԹՅԱՆ ՔԱՅ. ՏԵՂ-ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ

# ԱՏԵՆԱԻՆՕՍՈՒԹԻՒՆ

Գ.

Խօսուած Բագուի ս. Լուսաւորիչ մայր եկեղեցում 13-ն  
սեպտեմբերի 1909 թ. լաւուր ս. օձման Նորին վեհափառու-  
թեան Տ. Տ. Մատթէոս Բ-ի սրբազնակատար կաթողիկոսին  
ամենայն հալոց.



Թ Ի Ֆ Լ Ի Ս

ԷԼԵՔՏՐԱԿԱՐ ՏՊԱՐԱՆ ՕՐ. Ն. ԱԴԱՆԵԱՆՑԻ. ՊՈԼԻՑ 7  
1909

20 AUG 2013

~~15049 NOV 2009~~

$$\frac{200}{390 - 55}$$

281.6

3-43

47

## ԱՏԵՆԱԻՕՍՈՒԹԻՒՆ

այսորդ կառավարման

**Խոսուած Բագրիս ս. Լուսաւորից մալթ սկզբունքը 13-ն  
սեպտեմբերի 1909 թ. յաւուր ս. օժման Նորին վեհափառու-  
թեան S. S. Մատթէոս Բ-ի պրականակատար կաթողիկոսին  
ամենայն հալոց.**

1004  
1933



Թ Ի Ց Լ Ի Ս  
ԷԼԵՔՏՐԱԿԱՐԱՆ ՕՐ. Ա. ԱՐԱՄԵԼՎԱՐԻ. ՊՈԼԻ. 7  
1909

## Հրատարակում է

**ՎԱՂԱՐՇԱԿ ՏԵՐ-ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑԻ**

առաջին աշակերտի Գ. դասաւուան Լազարեան  
ճեմարանի Արևելյան լեզուաց—հանգեալ ի  
Տէր 1905 թ. փետրուարի 9-ին հայրենի  
Նորշէն գիւղում:

U. S. - 4.

وَالْمُؤْمِنُونَ الْمُؤْمِنُونَ إِنَّمَا يَعْصِيُهُمُ الظَّالِمُونَ

# ԱՏԵՎԱԿՈՍՈՒԹԻՒՆ

Մի ևս թախիծ, մի հեկեկանք, մի ևս տըրտ-  
մութիւն, մի վհատութիւն—զի այսօր մայրս  
մեր սուրբ եկեղեցին ցնծութեան տօն կը կա-  
տարէ: Հայոց այրիացեալ եկեղեցին այսօր կը  
պատառէ իւր անապակ երեսը ծածկող սև քողը  
և իւր արժանաւոր Ազգընտիր փեսային կըն-  
դունէ: Այս տօն—չէ հասարակ մի տօն, այս  
հանդէս չէ սովորական մի հանդէս.—Այս տօն է  
Ազգի և հայրենիքի փառքի, փառքի—որի ճաճառչ-  
ները երկնուատ են իջեալ և հիւսեալ:

Ճաւերի մէջ անգամ ցնծութիւն կայ, արցուաբն սերի մէջ ուրախ քրքիջ, աև սև օրերի տակ կարմիր օրեր — սևաթոյը ամպերի տակ փայլուն արշալոյս։ Ահա այսօր, եղբարք սիրեցեալք, հայոց ազգի թագ-

նուած կարմիր օրն է, պայծառ արշալոյսը. քանի որ Գանգէսի հովտից սկսած մինչև Հելետիոյ ծովակոծ խորշերը, Նեղոսի ափերից սկսած մինչև Նեւայի պղտոր-պղտոր հոսող ջրերը—որ երկնակամարի թակի հայի լողանք լայայ, այնտեղ և կայ ուրախ զօղանջիւն, այստեղ և կայ ծովածաւալ հայ ժողովուրդ նման այս փառապանծ եկեղեցւոյն—նման ձեզ, որոնք Տիրոջ սեղանի առաջ ուժախական արցունքներով—սրտի անվերջ բարախումներով մրմուճներ և մեղեդիներ են առաքում առ ազգերի ճակատագիր յօրինող մեծ ճարտարապետը տառապեալ Ազգիս նոր այցի համար:

Այս պահուս, հայեր, մտքով սլանանք այն աշխարհը, որտեղ օդն անոյշ է և ջուրն անմահական, այն երկիրը, որտեղ սպիտակափառ Մասիսն է բազմած և երկնից ամպերի հետ զրոյց է անում, այն հովիտը, որով «զարիւ-դարիւ խփելով» լալագին ձայներով ընթանում է հայոց ցաւերի և կոկիծների, անյուշ ժամանակների անխօս վկայն Արաքարը. Այդ պղտորուած եզերքից ոչ շատ հեռու կանաչների մէջ թագուած—համեստ մենաստանին, կանաչագմբէթ ս. Էջմիածնին մտքով ուխտ գնանք: Ի՞նչ տեսարան է— ազգային հանդէս սիրողի համար. բագմաթիւ մանը ու մեծ զանգակներն այնպիսի մի դողանջիւն են սկսել, այնպիսի մի երաժշտութիւն են

ակնել, որի նմանք ոչ մի ճանապարհորդ չէ տեսնել ոչ կեծնի մայր տաճարի գմբէթների տակ, ոչ Հռովմի Պօղոս-Պետրոսի հռչակաւոր ճարտարարութսաւ կաթողիկէի տակ. այստեղ ամեն մի ալլոք-նոր-նոր ջայն կը տայ, ամեն թոթիու նոր-նոր բան կանէ սրտիդ, ամեն ելակջ նոր-նոր խօսք կը մրմնջէ ականջիդ. ամեն ինչ մտքիդ ու հոգուգ հետ կը խօսէ. Հայի ճայներին հայութեան բովից, հայութեան սրտից— հայի սրտերի համար, թէ լաւ երաժշտութիւն կը սիրես—ով հայ, այդտեղ նոր խաղեր կը գըտնես, եթէ երաժշտութիւն չես սիրում, ով հայ, այդ ճայները քեզ երաժշտասէր կը շինեն:

Այդ երաժշտութեան տակ մտիկ տուր մենաստանի ընդարձակ բակին, տես այն բազմաթիւ կտուրները, դիտիր այն դալար և ջանել ծառերը, այլ շեմ ասում տաճարի կամարների տակը, այդ ծովածաւալ բազմութիւնը—այդ գլուխների—մարդկային գլուխների ովկիանոսը, հայ ժողովուրդն է լցուած Հայաստանի զանազան կողմերից, քաղաքներից—գիւղերից, լեռներից ու ձորերից, որոնք եկել են ազգային մեծ տօնին մասնակից լինելու: Թեզ թւում է; թէ մի բողէից կտուրները փուլ կը գան մարդկային մարմինների ծանրութիւնից—կամ ծառերը ճղնակտոր կը լինին իրանց ցանկալի ճիւց ընթացից: բայց ծառերն անգամ ոյժ

և կորով են ստացել այդ օրը համբերելու և դիմանալու նման իրենց մեծ հովանաւոր և համբերատար մօրը:

Մարդկային ծովի միջից հազիւ մի նեղ անցք են պահում պահապան և կարգապահ զինուորները իրենց մէջ տեղ ունենալով Մենաստանի և Հայաստանի զանազան կողմերից հաւաքուած հայ հոգեորականութեան ներկայացուցիչները իրենց ամբողջ զարդարանքներով և պերճանքներով։ Մայր հայրենիքը իւր գեղածիծաղ երկնակամարով և արևելքը իւր չքնաղ գոյներով ազգել և վառել են հայի մտքի և հոգու հետ խօսող թափորի վրայ. կերոնները ու խաչերը, շշոցները ու բուրգառները կընդրկի ազնիւ հոտերը հրապուրել են ամենքին. Լուռ է մարդկային այդ ծովը, և աչքը տնկել է վեհարանի բարձր սանդուխքներին և դարրասին։

Ահա և ինքը ծերունազարդ հայրապետը, հայոց իրաւանց միակ ներկայացուցիչը, հայոց իշխանապետութեան միակ ժառանգը հինաւուրց ժամանակներից — շըշապատուած տասներկու եպիսկոպոսներով, բոլորը-բոլորը պերճանքի և շըշութեան մէջ։ Հազարաւոր բազմութիւնը կարծես միաբերան չսպասելով եկեղեցական դասի հրաշատիառ Աստուած շարականի գեղեղանքին սրտեռանդն Կյուզուած կոչում է ԱՍուրը հայրապետ, մեծ հայրապետ—կեցցէ հայրա-

պետ», և իւր ուրախութիւնը՝ արցունքներով և սրտի բարախիւններով յաւերժացնում։

Եւ ինչու չլայ, ինչու չարտասուէ, ինչու չյուզուի ներքին յայգերից զի ծերունի հայրապետի անձի մէջ է քովանդակում հայոց անցեալ փառքի բոլոր մասերը։ Հայի սիրած այդ զգում է, այդ սուրբ զգացմունքը տնկել է նրա մէջ հայրենի պատմութիւնը, հայրենի մնացորդները, հայրենի աւերակները և խարխալեալ շէնքերը։ Եւ եթէ հնար տւնենային ի մի ռձայն ի մի բերան կը հնչէին բանաստեղծի հետ

«Թէ ի հրացան դրօշ մահաբեր,

Այլը ողջունեն իրանց տէրեր,

Կամ իգոռիւն թնդանօթաց—

Ահեղ ողջոյն տան իշխանաց—

Մեք մեր սրտից ի բարախիւն

Խոնարհ այլ ջերմ տամք քեզ ողջոյն»։

Այս, միայն խոնարհ և ջերմ ողջոյն. և այդ բաւ է մեր հայրապետին, զգայուն սրտերի տրուփը, աւելի ուժեղ է և տևական քան հազարաւուրց թնդանօթների որոտը։

Շարժուեց թափորը գէսի Մայր Տաճարը,

Միածնաէջ տեղը։ Հնչեց ալախօնիկ տիրացուաց

և երգիչ խմբի քաղցր դայլալիկները։ հասաւ սուրբ հայրապետը այն վայրը սրբազնն, որտեղ

հայոց ճաճանչաւոր խաչը կը պլազայ, նման երկնուստ իջեալ ճաճանչներին և լուսոյ շողին, որոնք լուսաւորեցին Տեղին այն, որուեղ շինուեց Շխորանն լուսոյ, քանզի ինսմածագեց մեզ լոյսի Հասաստան աշխարհից:

Սկսուեց արտայոյզ արարողութիւնը Զոքեց վեհափառ հայրապետը շուրջ բոլորեցին արքեպիսկոպոսներ և եպիսկոպոսներ և թափելով ազգային միացուցիչ և կազդուրիչ օծեալ իւղ ս. Միւսոնը, այն դիւթիչ նիւթը որը կապում է արևելքի և արևմուտքի հայը ի մի, նրա գագաթի վրայ, հնչեցին «օրնեսցի և օծցի» սահմանեալ երգը, — երգ՝ որ հնչուել է Մեծն Ներսիսից մինչև այսօր Ս. Էջմիածնի կամարների տակ: Լուս է հայրապետը և յնւզուած. ձեռքերը կարկանած աղօթքներէ մըմնջում, լուս է և յուզուած հայ խուռներամ ժողովուրդը:

Ի՞նչ մտքեր, ի՞նչ ծրագրներ, ի՞նչ խոհեր, յոյսեր: Խաչի տօնի օրը խաչուած ազգը իւր հայրապետին կ'օծէ — ի՞նչ փառաւոր գուգակիպութիւն: Անշուշտ Լուսաւորիչը իւր խաչ գաւագանով, սէգն Տրդատը իւր խոնացնեցըած ճակատով աչքի առջև կը գայ: Երկնը և երկրի կապող շողը, թափող լոյսը, արքայի: պալատի վրայ կրակ սիւնը, լուսաւոր խաչը մտքի առջև կը գան, կ'անցնեն: Կ'անցնէ և Լուսաւորիչը կոթնած գաւագանին, Սեպուհ սարի վրայ

երկնը հետ խօնելիս, երկնուստպատճամ ընդունելիս. կ'անցնէ Սահակի և Մեսրովի, Զորափորցու և Ծնորհալու պայծառ դէմքերը. կ'անցնէ և հայ ազգի կորացած վիզը ցաւերի ծանրութիւնից. հայի խոցուած սիրտը՝ դառնաղէտ սարսափներից, կը յիշէ, որ ինքն է՝ որ պիտի արցունքները սրբէ Տաւրոսեան լեռներից սկսեալ մինչև աւելակացեալ Արցախի բարձունքները, և մինչև Սասունի քարանձաւները և բոլորին հրաւիրէ և հասցնէ պէտի վայրի դալարոնց և առջուրս հանգստեան:

Ինկ գուրմը, հայեր, վանքից դուզս ի՞նչեր է կատարելում: Ասեղ ձգելու տեղ չը կայ, ոչ մենաստանի լայնարձակ բակում, ոչ կից հրապարակներում, ոչ մօտիկ լճի ափին և ոչ բակ անտառում: Ամեն տեղ բացօղեայ վրաններ և ամեն տեղ ուխտաւորների անթիւ ու անհամար բազմութիւն: Սյս սրբազան տօնին, այս սրբազան վայրում Հայաստանը իւր ամբողջ հայաբնակ վայրերով իւր ներկայացուցիչներն ունի Տարագներին չքնաղ լեզուի ախործ բարբառների ցուցահանդէս է: Մանաւանդ այժմ այս տարի շնորհիւ ազատ երթևեկութեան Ս. Էջմիածնի կարօտ, երկար տարիներ նրա անման տեսքին անձկակարօտ Հայաստանցին կը բեկով երկար ճանապարհ, անցնելով խութեր և առապարհներ, սահմանքաւոր գետեր և վտանգա-

ւոր գետակներ շտապել է իւր կարօտը առնելու  
անձկալի վայրերից, շտապել է իւր հայրենիքի  
պարծանաց հանդէս տօնը տեսնելու և իւր նա-  
խանայրերի սիրած ու պաշտած Տեղում գէթ  
մի անգամ իւր կեանքի ընթացքում աղօթելու  
ազատ արիւն-արցունքից, ազատ սրից և հրից:

Հայեր, մտիկ տուէք այդ խայտաբղետ  
բազմութեան. այդտեղ է հայ վաճառականը-  
թողած իւր առկտուրն ու գործ, այդտեղ է հայ  
ուսուցիչը իւր աշակերտով, այդտեղ է հայ մայ-  
րը իւր քնքոյց զաւակներով, այդտեղ է հայ իշ-  
խանը իւր ընտանիքով, այդտեղ է հայ արհես-  
տաւորը իւր մերձաւորներով, այդտեղ է հայ  
մշակը-իւր կուսական քողն երեսին ամօթիած  
աղջիկներով. Մի խօսքով այդտեղ է մեծն ու  
փոքրը, հարուստն ու աղքատը, տանուտէրն ու  
շինականը, թողած իրենց գործ, իրենց աշխա-  
տանքի աղբիւրները, թոլորը-բոլորը մի միտք ոււ-  
նին-ուկստ անել հայոց սրբազն մասանց վրայ,  
աղօթել մի նուագ իրենց մեծ-հովուապետի հետ,  
և իրենց սրտեռանդն մրմունջները խառնել նրա  
աղօթից հետ-առ մեծ աղօթողն, և չովուին  
չսկողիան, որի մտքի մէջ սեեռել էր երկինքն  
ու երկիրը, Լուսաւոր շողն ու Միածինը, ոսկէ  
ուռն ու անդարամետի սարսումը, և ապա լու-  
սաւոր խաչը և հայի լոյս ապագան:

Այդ լոյսը, այդ լոյսի կարօտն ու սէրը սրտում

կրակ կտրած համարին եղբայրներ, մի ազգի որ-  
դիք ու թոռներ և կել են լոյսի խորանի կամացների  
տակ մի օր, մի ժամ ապրելու և զգալու:  
Պիտի տեսնել եփրատի քաղցը ջրերով  
մնուած, մայր Հայաստանի կենսատու օգով քոյ  
քաշած հայ գեղջուկ նազելի կոյսերին այդ պա-  
հուն Ս. Եջմիածնայ շուրջը պար բռնած իրենց  
մայրերից անգիր սերտած երգը երգելիս,

«Եհս իջաւ Աստուած վերէն».

Եինէց տաճար մեր քարեռէն,

Եջմիածին, Եջմիածին:

Եւսքն է մերոյ լուսաւորչին,

Հաւատք Քրիստոսին

Փառք սուլը խաչին»:

Ո՞չ մի պատմաբան, ոչ մի քաղաքագէտ չի  
հիւսել այս երգը և ոչ մի վիլխովիայ չէ վար-  
ժել այս միտքը հայի սրտին, թէ Եջմիածինը,  
հաւատքը Քրիստոսի, Խաչի փառքը պիտի սի-  
րել, պիտի պաշտել: Այլ հայ մայրենց են հիւսել  
իրենց կրծքի տակ բովանդակ ծաղիկներից: Հո-  
տուտեցէք, մայրեր, այդ աննման ծաղկից և  
տնկեցէք ծեր զաւակների հոգու մէջ այդ ծաղ-  
կից, եղեմի դրախտիցն է և եփրատի ափերից:  
Կարծես մարդ այդ պահուն ուզում է խլել

բանաստեղծի խօսքը, և ասել

«Եթէ խռոված լինիս, ով օտարը,

Հակառակ կամքիդ այդ կանաչավառ

Դարեր եկան, դարեր անցան, էջմիածին,  
Քը հիմն անշարժու անսասան, էջմիածին նձ  
Իսկ եթէ, հայեր, թերթենք, մեր անցեալ փառքի  
սական գրականութիւնը, մեր անցեալ փառքի  
ներբողեանները առ էջմիածին, ինչ վեհ զգաց-  
մունքներ և ինչ խորին խոհեր կը բացուին մըտ-  
քիդ, առջե, հոգուց առջե, Բաց արէք այդ ձեր  
զաւակաց առջե:

**Միթէ միան,** բանաստեղծ պիտի լինել  
կամ բարձրաստիճան հոգևորական կամ փառա-  
ւոր աշխարհական և կամ հմտալից ուսումնա-  
կան այսպիսի յուզմունք և սէր ունենալու հա-  
մար. ոչ երբէք. Այլ ամէն մի հայ, որի երակ-  
նելում հայի արիւն կը խաղայնա իրաւունք  
իսկ չունի չը յուզուելու, չը սիրելու. նա աւելի  
հզօր թափով պիտի փայլեցնէ իւր ներքեն աշ-  
խարհը առ ազգիս Արէ Ս. Էջմիածինը նման  
իւր ազնիւ նախահազը, նման այն անձնուելը  
եղայրակցաց, որոնք այս պահուս փարուել  
են «մշտականաց կեպարիսի» չորս բոլորք:

**Այն որ հայն է,** որ իւր անձնական բարիքից  
դուս ընական պարտք չէ զգում գէպի իւր  
մերձաւորը, ընկերը և ընդհանուրը, յուշ լիցի-  
ձեղ, որ անձնական և ըընդհանուր բարիկեն-  
դանութեան գագաթնակէտին բազմած է Ս.  
Էջմիածինը:

**Այն որ հայն է,** որ բացի ֆիզիքական իր

Տեսարանները քեզ կը հրաւիրեն  
Որ քաղցր ստուեր վրադ տարածենք:

Այս, հայ մարդ, եթէ խոռված ես Ս. Էջմիած-  
նուց, քո կամքիդ հակառակ գնա տես կենդանի  
կանաչները—հայութեան ամբողջութիւնը՝ ու ապ-  
րիր և գու յաւիտեան կապրեն, քո զաւակներդ  
առաւել եմ իւապրեն:

Ես այսպէս եմ տեսել տարիներ առաջ, իմ  
համեստ լեկուն միայն այսչափ կարողացաւ տալ  
իմ աշքով տեսածը և սրտիկ զգացածը և  
ականջով լսածը: Իսկ հայ ազգի բանա-  
ստեղծները պահային երգիչները ինչպէս են  
երգել, ինչպէս են ազդուել և ազդել  
իսկիւս աշխարհի ցրուած հայերի սրտերի  
քնքոյց լարերին: Բաց արէք բանաստեղծ հրա-  
պարակախօս անզուգական հայի նուրբ սրտի  
ծալքը և հոտոտեցէք այս աննման ծաղիկը  
էջմիածին, էջմիածին մշտականաչ կիպարիս  
Հայաստանի սրտում տնկած»

Կամ ժողովրդական զգացմունքների թարգման  
աշուղ երգչին

«էջմիածին բիստ սիրուն տեսայ  
Երկու հարիւր կանթեղ շար տեսայ. ու  
կամ Էջմիածնու հովանու տակ իւր ման-  
կական օրերը քաշած և ապա նրա փառք ճեմա-  
րանին իւր կեանքը նուիրած ազնիւ քնարերգակ  
քերթողի հոգենուագ թոթիուը լսեցէք»

լիսելուց, ուրիշ հոգեկան նիրոյ առարկայ չի ունեցել երբեմիցէ ի բաւականութիւն իւր կարողութեանց և ի միխթարութիւն իւր ներքին աշխարհի Ահա այդ սիրոյ առարկաներից ամենից բարձրը և ամենից սիրելին ս. Էջմիածնին է:

Այն ո՞ր հայն է, որ չնայած իւր մասնաւոր, գուցէ և բարեյաջող հանգամանքներին, երբեմիցէ լսած չվիճ մեր անցեալ և ներկայ թշուահութեանց ծանր փորձանքների մասին, պատմական սարսուցուցիչ կորսաների մասին. բայց այդքան սարսափմերի տակ հային միխթարող, սիրու տուող պայծառ օրերի գրաւականը ա. Էջմիածնին է:

Այն ո՞ր գիտնականն է, լինի հայ թէ օտարազգի, որ պատմական փաստերի ուղիղ եղացութեամբ, ազգային գոյութեան և պահպանութեան մասնիկների միաւորութիւնը չէ տեսել ս. Էջմիածնի մէջ, առանց որոյ ըստ մեծ հուետորի ռատորադաս բոլոր իրերը ու Երկոյթները երեսն ի վեր շուռ կը գանք:

Այն ո՞ր փիլիսոփան է, թէկուզ բնազանցական գիտութեանց հետևողը, որ թափ է անց կենում իւր մտաւոր պաշարների մէջ, իւր սուր աշքերով քննում—քննադատում, պատրում—պըրպատում, և չէ հանում—այս ռողկոյզը ճշմարտութեան, որ հայութեան խորհուրդը—գոյութեան նեցուվը ազգային կրօնն է կանաչա-

գմբէթ էջմիածնի կամարների ու կաթողիկէի տակ:

Այն ո՞ր անսարափ սրտի տէր հայն է, որ ամեն անգամ և. Էջմիածնի պանծալի անուն լը-սելիս գլխարկն ի ձեռն, ճակատը բաց—խոնարհութեան նշանով աջող իսաչ չի հանում իր երեսունին, իր սրտի սէրը յայտնում և նրա վեհութիւնն ընդունում:

Այսպէս, հայեր, հայը հայ կը մնայ բիւրաւոր փորձութեանց դիմացող իրեւ ամուր կայծաքար իւր ազգային եկեղեցով, այսինքն այն եկեղեցով, որը ամեն մի շուրջ, ամեն մի փայլ տուեց, բայց իւր ազգը պինդ պահեց—բոլոր գիշատիչ բազէներից և ահեղ թաշումներից, իսկ ազգը իւր հերթուամ, իւր հերոսների անվերջ շարքերով, իւր խնկելի նահատակների փայլուն շարանների արիւնով ներկեց և կոեց այդ եկեղեցու իւրաքանչիւր մի քարը, մի շրւղը, մի կիրը: Այսպէս ազգը և եկեղեցին հիւսուեցին իրեւն ըլուսոյ շողմ, իսկ լուսոյ շողի անարանը ու ջինջ աղբիւրը սուրբ Էջմիածնին է:

Հայը հայ կը մնայ իւր ազգային ինքնատիպ ժամապաշտութեամբ, ըստ կտակի կուսաւորչի ժամապաշտարութիւն, դարաւոր ծիսարանով—, ժամապատարութով, դարաւոր ծիսարանով—, ըստ գաւանական և առաքելահիմն կանաներով ըստ համկացողութեան և մեկնութեան մեր անսման հայրերի: իսկ այդ բոլորի մատակարար և կեանք հայրերի:

տուողը «մշտականաչ կիպարիս» ս. էջմիածինն է:  
Հայը հայ կը մնայ—երբ հայաբար կը գոր-  
ծէ, հայաբար կը մտածէ, հայաբար կ'աղօթէ, հա-  
յաբար իւր մրմունջները կ'ուղղէ իւր ստեղծողի  
դահին և այդ գահի սանդուխքների սկիզբն այն  
կամարների տակ է, որի ընդհանուր անունը  
Հայաստանեայց եկեղեցի է, իսկ այդ եկեղեցու  
մայրը ս. էջմիածինն է:

Հայ վաճառականը հայ կը մնայ, եթէ իւր  
բոլոր գործառութեանց սկզբին ու վախճանին,  
իւր շահերի գանձման պահուն կամ իւր արդեանց  
ժողովման ատեն իւր ուշքն ու միտքը իւր հայ-  
րենակցաց վրայ կը պահէ, և իւր հայրենի եր-  
կրի ինչպէս արդեանց նոյնպէս և որդոց իւր  
հովանու աակ կը պահէ. իսկ այդ զգացմունք  
թելագրող և զգայուն սիրտ տուողը լուսաձա-  
ճանչ էջմիածինն է:

Հայ մշակն ու արհեստաւորը հայ կը մնայ, երբ  
կը մնայ հաւատարիմ ոչ միայն իւր երկրին և իւր  
գործին, այլ և «հայրատունկ այգւոյն», և որպէս  
«Ժիր մատուակը» սնունդ և ջուր կը հայթայթէ  
հայոց լեռներից բղիող ըլքան աղբիւրների սառ-  
նորակ ջրերից: Եւ այդ մեղքից անոյշ ջրերի  
շտեմարանը ու սառնարանը Ս. էջմիածինն է:

Հայը հայ կը մնայ, երբ ունկորը, կամ մե-  
ծատունը ըստ նախկին սովորութեանց իւր կամ-  
քի, իւր կարողութեան մի վտակը միշտ կը

ճամփէ-դէպի հայրենեաց մեծ ակնը, իսկ այդ  
ակնը և ջրաբաշխը Ս. էջմիածինն է:

Հայ քնքոյշ սեուը հայութեան մէջ կը մնայ,  
երբ իւր մատների և սրտի զգացմունքների նշան-  
ները յանուն բոլոր հայոց մայրերի մուրատա-  
տու վայրը կ'ուղղէ. իսկ այդ մեծ մուրատա-  
տուն Ս. էջմիածինն է:

1933/1004

Հայեր, անշուշտ մի փոքր կարողացայ գա-  
ղափար տալ—ընդհանուրիս հայրենիք ս. էջ-  
միածնի մասին, բայց կարծես այս բոլորը մի-  
այն ի ծննդենէ կրօն սիրողի համար, կրօնիս  
գաստիարակութեամբ մեծացողի համար է: Իսկ  
ինչ ասենք ժամանակակից հովերով բեռնաւո-  
րածներին, կամ մեր խեղճ թերակատար ուսու-  
ցիչ և աշակերտին:—Այն պիտի ասել և այս  
պատմական ճշմարտութիւնը, որ պարզ է ինչ-  
պէս երկնքի լուսատուն, էջմիածինն է տուել  
հայոց ժողովրդին—զիր ու զրականութիւն, էջ-  
միածինն է տուել ոչ միայն ազգային կրօնք—  
այլ և ազգային և սեպհական տառեր: Էջմիա-  
ծնի հաստատութեան հարիւրամեակին համա-  
րեա ազգը կուսաւորչի և Մեծն Տրդատի յիշա-  
տակը յաւերժացնելիս նոր լուսաւորիչների ձեռ-  
քով դպրութիւն ստացաւ: իսկ այդ դպրութիւ-  
նը լոկ անուն չէր և ոչ խօսք, այլ դպրութիւնը  
թիւն ու լոյս եր—որ տարածուեց էջմիածին թրակուլութիւնը  
դէպի գաւառները: Յիշեցէր մի շաբաթ լուսաւորիչների պահպանը  
7/11/1922



անուններ—Սահակ և Մեսրոպը, Եղիշիկ և Եղիշէց, Յովսէփ և Մովսէս Մրանք ինքնուրոյն լեզուա, ինքնուրոյն ոճ և գիր պարզեցնին ազգին, գիտնական գրքեր տուին, «հայի խաւար մտքերին վառ-վառ ջահեր տուին, ազգի միտքը լուսաւորուեց ո. Էջմիածնայ աթոռակալի և գործակցաց ձեռքով։ Եւ ազգն ու եկեղեցին ազատուեց օտար հարստահարդաթիւնից, թէկուզ այդ գիտութեան անունով։

Ո՞վ տուեց ձեզ, ով խանապահանջ հայեր, ազգային ինքնազիտակցութիւն, ազգային մտորմանց եղանակ և ձեւ, ով կոեցակոմիեց Զեր մընքերի ողորժները աշխարհային հարուածների դէմ մաքառելու, եթէ ոչ ա. Էջմիածնը։

Ո՞վ տուեց քեզ բանասնեղծութիւն ու պատմութիւն, պիլիստիակայութիւն, ու ինանտասիրութիւն—եթէ ոչ ա. Էջմիածնը։ Ո՞վ չէ հրացել, չէ սիրել և չէ ապրել—այդ անսման գոհհարներով, որոնք ցայտոր սկսած հինգերորդ կարից պմայլմանց հետ գրանութիւն և պնջար են տալիս ոչ միայն միզու ազգի որդիներին, այլ և բոլոր մերող և հետաքրքրութեալ իմաստուն եւըսպացոյք։

Եւ Ամբեայսքան ու սրբն աման անվերջ փաստերի հիման վրայ, իրաւունք չունի հայ մարդի սրբացնելուն և Էջմիածնայ կանաւոր գաղափարի հետ և նրա պրեմազն կերպուածքի իւլա-

քանչիւր քարը ու շիւղը, կրի կտորը—կամ աղիւսի մասնիկը։

Եւ միթէ-այս զգացմունքը և սէրը չէր, Շահաբասի ձեռքով Հայաստանից խած և բռնի հատած այս ժողովրդի գառը վիճակը ատեղծողը, ստիպուած էր օրն ի բուն լալ և արտասուել։ Աղքան սպասում էր, որ երկիրը հայը շէնացնէ, հողը մշակէ, այգի տնկէ, խոկ հայի սիրատը կտոր-կտոր է լինում։ Արան այնքան չէր վշտացնում իր հայրենի հողն ու ջուրը, երկիրն ու դաշտը, այլ ա. Էջմիածնը—և նրա կարուուկ ու ժողովուրդը, հազարաւոր մարդիկ հայւում և մաշւում էին։ Եւ նրանց քիմքերից կարօտակէղ մաշւում էին։ Եւ պատճառը—որ մուխ էր գուրսգալիս։ և այդ էր պատճառը—որ Շահաբասը հրամայեց քանդել ս. Էջմիածնը իւր հիմքից և բերել իւր երկրում նոր Էջմիածնն շինել։ Այս լուրը ցնցեց իւր հպատակ ժողովրդիներ, բայց բարեբաղդաբար միայն 14 քար պողին, բայց բարեբաղդաբար միայն 14 քար պողին, այլու և այս ամբողջ տարիուց Սպանան։ Ամելով ա. Էջմիածնայ շէնքից տարիուց Սպանան։ Ամաբասի սայլերը ճոնչալով հասան Պարսկաստան հային նոր Էջմիածնն տրուեց։ Եւ այդ քարերի վրայ հայը իւր ուշտը արաւ, իւր աղօթքը արաւ, սրբեց իւր աչքի արիւն-արցունքը։ Մոռացնելէք, արիւները առաջ ինչպէս վէրքու ստացաւ հայ ազգը։ բոլորին համբերից, բայց երբ վէրքը հասաւ ա. Էջմիածնին, մեծ ու փոքր ի մի նիրտ, ի մի հոգի—կուրծքը դէմ տուին

հրացանի գնդակին և անթիւ նահատակներ տըւին. և վէրքերից մեռնող հայը չցաւեց, չաւաղեցիւր մահը, զի ս. Էջմիածնի անունով է կոռւել և նրա, գոյութեան և իրաւանց համար է դրել իւր ծաղիկ կեանքը: Ահա—հայեր ս. Էջմիածնի խորհուրդն ու գաղտնիքը:

Միթէ այս մեծ գաղափարի ոյժը չէր, որ երբ տարիներ, առաջ շատ հայեր տգիտութեան մէջ թաղուած թղղեցին իրենց հանուր մօր ս. Էջմիածնի հովանին, բայց որ միսիթարականն է ու ուրախալին գիտնական զէնքերով զրահաւորուած ատեն դարձան ի ծոց իրենց կաթողին մօր ս. Էջմիածնի, վառուած այս մեծ գաղափարով:

Զարաբաստիկ փորձութիւններ շատ տեսանք, հայեր, և դրանք մեզ դաստու և ուսուցիչ եղան, որ վայր ել դիմենք ապահովութեան համար, որտեղ ել ապաստան մտնենք — միակ ուղիղը և միակ ճշմարիտը, միակ անսայթաքը և միակ կարճը — ըստ երկրաչափական ճշմարտութեան ս. Էջմիածնի ճանփան է, նրա հովանին է և նրա անսասանութիւնը:

Եթէ ընդհանուր եզրակացութիւն հանեմ իմ առարկութիւններից, կը մինի այսպէս, հայի համար շշահերի շահը և նպատակների նպատակը իւր կրօնքն է և կրօնական կեդրոն ս. Էջմիածնը: Հաւատարմութեան և անկեղծու-

թեան զգացմունքներով միայն կարենք դիմանալ բոլոր սպառնալից արհաւելքներին: Ուստի և այս պահուս ձեր այդքան լարուած և ուշիմ բոպէին ուխտ դրէք, հայեր, նման առ գետս բարելացւոց գերի և տանջուող ժողովրդի ուխտին այսպէս — «Եթէ մոռացայց զքեզ երուսաղէմ... մոռասցի զիս աջ իմ»: Ուրիշ խօսքով «Թող պապանձուի իմ լեզուն, եթէ մոռանամ քեզ, Էջմիածնին»:

Բայց ինչ է նաւը առանց նաւակարի: — Ծովի կատաղի ալիքները նրան փշուր փշուր կանեն դեռ չհասած իւր կայան նաւահանգստին: Ի՞նչ է այգին առանց այգեպանի: — բոլոր մատադ տունկերը կոխան կը դառնան անասունների և գաղանների ոհմակներից — այլ չեմ առում ուրիշի աշխատանքով յղիացող մարդկանց: Ի՞նչ է պարտէզը — առանց նմուտ պարտիզանիւթերի բոլոր միջատներն անդամ խօսք մէ կ արած կը քանդեն, կը կործանեն բոլոր ծառ ու ծաղիկ և նախկին անմահական հոտ տուող բուրաստանը կը փոխուի ամայացեալ մի վայրի: Վերջապէս ի՞նչ է ազգը առանց առաջնորդ և դեկավար գլխի, կամ ի՞նչ է եկեղեցին և Էջմիածնը առանց նրա պետի և դէտի: — Ոչինչ կը լինէր, եթէ այդ չինէր. բայց վառք Տիրոջ — պատիւ մեր վեհափառ կայներ, պատիւ

մեր ժողովրդին, զի այսօր հայոց արժանաւոր հայրապետը կը բազմէ ազգային միակ և փառափանծ գահին, Վառուեց Լուսաւորչի մտքի ծալքերում արձանացած լուսաւոր խաչը, որի փայլը հեռու և հեռու կը համեմ մինչ ովկիան կապուտակ:

Այժմ ինչ է հայրապետութեան իրաւունքն ու բովանդակութիւն, պարտիք և գործ, որը քառաթե ձևով լուսազարդել է նախկին Հայրապետի մտքի մէջ հրաշակերտած կրակ սիւն եկեղեցուն:

Նախ՝ այս-ինչ որ ինքը մեր հայրապետ Մատթէոս ք. իւր երիտասարդական հասակում մակաբերել է իւր արժանաւոր հեղինակութեան մէջ. «պահպանութիւն և ամբողջութիւն Հայաստանեայց ուղղափառ եկեղեցւոյ և ամրապինդ պահելով Քրիստոսադիր կարգ ու կանոն, առաքելական և լուսաւորչական աւանդութիւնք և արարողութիւնք, որ ի նախնեաց մերոց ի սրբոց հարց և քաջարի նահատակաց մեզի մնացած անգին ու անգիւտ սրտահատոր նշխարներ են բազմաթիւ հայերու արինով շաղախուած և մեզի հասած, որք մեր ազգութեան միմիայն կնիքը կը կրեն և անոնցմով ենք այսօր հայ ազգ մը աշխարհի առջև: Եւ իսկապէս պահպանութիւն և յաւանդումն բոլոր գալոց սերնդին այն ամենը, ինչ որ մեզ միացնում է անցեալի հետ, ներկայն նշանակալից է դարձնում,

ապագան-այդ ցնորքների աշխարհը-յուսալից: Իսկ չէ որ մեր բոլոր լիշեալ կարգ ու կանոնը, օրէնքն ու սովորութիւնը մեզ չեն զրկում քաղաքակիրթ լինելուց, -չեն զրկում կրթուած լինելուց, այլ ընդհակառակը մեր բոլոր ստացած գիտութիւնները քաղցրանում են, սիրելի են դառնում, զի մենք բացի գիտութեան անօթ լինելուց, սիրում ենք և ազգային ըմբռնմանց և սերմանց անօթ լինելու, իսկ այդտեղ միայն արգասաբեր սերմունք ազգային անցեալից և յիշատակօք լի անցեալից կը ստանանք:

Երկրորդ՝ հայրապետական պարտիք կրօնական և ազգային կանոնից պահպանութիւնից յետոյ պիտի անցնէ արդէն իրաւական խնդրոյն: Նա է որ պիտի պահպանէ ազգիս շնորհած բոլոր իրաւունքները և արտօնութիւնները հին հին ժամանակակից մեծագործ արքաներից, փառաւոր կայսրներից: Այդ իրաւունքները վերաբերում են թէ ամբողջական ազգիս, թէ հատուածական մասերին ամեն մի երկրում և թէ անհատական: Միթէ ձեզ յայտնի չէ այն բոլոր երկրներում, որտեղ հայը խաղաղութեան նշոյլն անգամ տեսել է, նա շէնացրել է երկիրը, նա ծաղկեցրել է արհեստը, նա փայլեցրել է վաճառականութիւնը: Եւ բոլոր տիրող պետերը առատապէս պարգևներ են շնորհաբաշխել ազգին ընդհանրապէս կամ մասնաւորապէս կամ անհատականա-

պէս, Այդպիսի իրաւանց-վտանգուած դէպքում հայրապետը պիտի իշխանական և իրաւական բոլոր ոյժով յառաջ ընթանայ բոլոր կայսերաց առջև կամ զատ-զատ և նրանց հպատակ ժողովրդի, հպատակ եկեղեցւոյ արտօնութիւնները ըստ ազգային սահմանադրութեանց կամ ըստ կանոնական հրահանգաց պաշտպանելու և վերականգնելու: Զի ով է, որ այդ մասին կարող է իւր ձայնը բարձրացնել աշխարհի առաջ, տիրող պետի առաջ, եթէ ոչ ազգի ընդհանուր քուէով ընտրուած հովուապետը և հայրապետը, լուսաւորչի յաջորդը և աթոռակալը: Քանի քանի երկրներում են ցրուած մեր ազգայինք, եթէ քարտէզը-համատարած աշխարհացոյցը զնես առջետ, համարեա ամեն տեղ կը գտնես հայ, բայց բազմութեամբ և շատութեամբ դեռ Հայստանի հողի վրայ կը գտնենք-երեք կայսերանց խնամքի տակ: Ոչ միայն Հայրապետն ազգիս այս երեք կայսերաց մօտ իւր հօտի շահերը և կարիքները պիտի ի նկատի առնէ, այլ դեռ հնդկաստանցի հայուն համար ալբիոնի արքունիքում, Աւստրիոյ, Վենգրիոյ հովանու տակ ապրող հայի համար Վեննայում-և այն: Զարաքաստիկ հանգամանքներ շատ ապացոյցներ տուին, որ հայրապետական պաշտպանութիւնը շատ անգամ յարգուել է-չյարգուած դէպքում ան-

հետեւանք - չէ անցել պատմական և իրաւական փաստաբանութիւնքը հայրապետութեան: Երբորդ՝ հայրապետական իրաւանցն է ենթարկում ըստ անցեալ օրինաց և ըստ ներկայ կարգաց ազգային գլորցաց դեկը և բոլոր ազգային պատանեկութեան ուղիղ դաստիարակութեան գործը: Ո՞վ կարող է ժխտել: որ մանուկ սերնդից չէ կախուած մեր յոյսերը ու մեր ապագան, ով կարող է պնդել, որ առանց կը թթուած և հոգով ազնուացած սերնդի մենք կարող ենք բարեկիրթ ժողովուրդ ունենալ մտածող իւր ազգի և նրա հիմանց շահերի վրայ: Դառն օրեր եկան հայոց գլորցաց գլխին կամ հայ պատանեկութեան վրայ: Թեթևամիտ հովերով լցուեցան հայոց կրթութեան վայրերը, հայոց դաստիարակները իկոչմանէ չէին հրաւիրուած: Արտաքին կեանքի պղտոր ալիքները հասան և մեր ջինջ ու յստակ գետերին և վարակեցին, հայոց անմահական ջրերը լուսաւորչու և Ներսէսի, և Սահակի և Մեսրովի տնկած այգուն կարծես գագարեցին ջուր տալուց, ջուրը եկաւ դրսի հեղեղներից և ողողեց անպատճէշ, անպաշտպան պարտէզներն ու այգիները. շատ ծառեր-զօրլացան, շատ ծաղիկներ դալկացան: Հայոց հայրապետի գաւազանը-այժմ Մովսէսի գաւազանի նման պիտի խփուի պղտորուած ջրերին-յորդացած հեղեղատներին մաքրուելու

և գտելու նման, նախկին մաքուր, և անապական հայոց երկրից բղկառ ջրերին։ Հայոց մանուկ սերունդը կարօտ է ազնիւ, և հայկական, քարոշական և ազգային կրօնական, ուղիղ դաստիարակութեան։ Հայոց եկեղեցւոյ հոգին պիտի առանձին բոլոր դպրոցաց վրայ, բոլոր երիտասարդու մանուկ հայ պատի անդամոց վրայ, հեռու պիտի վանուին բոլոր օտարամոլ ուղղութեանք, անուղիղ միջոցներ, որոնք մտել են յանունիբարե թէ արտաքնոց, հեռու պիտի վանուին բոլոր ճամացակադ վարպետներ, Ուր են մեր հայկաբան և երրոյ մեր հոգով մանկավարժները, մեր կրօնի հոգևոր գաստիարակիչները, նրանց տեղը մանկամարդ և տղացամիշտ երիտասարդներ, են, բոլոներ, որոնք կրթուելու տեղ-պիտի կրթեն, սովորելու տեղ պիտի առիջորնեն։

Հայոց հայրապետը պիտի անմիջական օգ-  
նութեան համէ իւր աճող սերնդին, պէտք է  
նրա ղեկավար մարմնին գեղը ցոյց տայ և անե-  
լիքը ու պարագրը համակացնէ Զգայուն և սրբի  
տէր ժողովուրդ և մեզ պէտք, իսկ առանց  
զգացմունքի և սրբի գիտութեան ինչպէս կարե-  
լի է այնպիսի ժողովուրդ կրթել իսկ սրտի և  
զգացմունքի գիտութեանը ազգային կրօնն է, աղ-  
գային Նկեղեցւոյ պատրաստուած պաշտօնեայի  
ձեռքով:

## Անարժանութիւնը նշառակէ շինել ազգին և

թիւնը, և եթէ նրանք պաշտպանուելու տեղ և յեւան պիտի ունենան:

Զորորդ՝ Հայոց հայրապետի պարտքի և իրաւանց մէջ է մտնում Հայոց աւերակ և խարխալեալ վանքերը և նրանց ունեցած կալուածքները շնորհաբաշխուած ժողովրդի ջերմեռանդ և ունեոր մասերից, հարազատ իշխաններից և տիրող արքաներից: — Ենչ են այդ վանքերը, հայեր, դուք, ակնապիշ հայոց ժողովուրդ. այդ սրբազն շնորհերը հեռու կեղուններից և ժխորից ներկայացնում են հայոց գիտութեանց տաճարները, նախկին հայոց համալսարանները: Բնութեան ծոցում, մայր երկրի կրծքում ձշմարիտ հայրենասէրները, ներշնչեալ վարդապետները հաւաքած իրենց շուրջը հայազն պատանիների գիտութիւն էին տալիս: Այդտեղ էր աւանդում հային հայրենապիտութիւն, սուրբ գիրք, հայոց պատմութիւն, բանաստեղծութիւն, փիլիսոփիայութիւն և ուսողական գիտութիւնը, այսինքն ձեր լսած և սովորած մաթեմաթիկան: Քանի քանի նշանաւոր անձինք են տուել այդ ներկայ հայի մտքից հեռու, սրտից հեռու պաշտելի վայրերը: Թերթեցէք հայոց պատմութիւնը, հայ գրականութեան էջերը... Հանգած են այդ լուսոյ ջահերը պարզ բնութեան ծոցում, տնկուած հայրենի երկրի կրծքում, վառել է պէտք հանգած օջաղը, որն իւր Տիրոջն է սպասել անդա-

դրում և սրտատրովի: Յուշ լիցի, ձեզ, Որոտնեցիները, Տաթևացիները, Շիրակացիները և Մաթուսաղանները, և խօսքի հերոս, աննման քնարի տէր և տաւղի տէր Նարեկացին, դրանք ոչ այլ տեղ են ուսել և ուսուցել, եթէ ոչ հայոց լեռների, քարանձաւների անտառների հովանու տակ կերտուած վանքերում: Այս է եղել վանքերի էռոթիւնը և գոյութիւնը, այդ պիտի լինի և այժմ: Կործանած և խարխալեալ հայոց տները պիտի կանգնեն, պիտի ապրին պիտի լոյս տան աշխարհին. միք ասիլ-այնտեղ քիչ գործ կայ անելու, գործը և լոյսը ամեն ժամանակ և ամեն տեղ եղել է և պիտի լինի, միայն քաղաքները չեն-որ լուսոյ վառարան կարող են լինել, իսկական լոյսը ամենաանմատչելի տեղերում աւելի վառ և պայծառ է լուսաւորում և աւելի նպատակայարմար է:

Երանի ձեզ, ինկելի հայրեր, որ համեստութեան քողի տակ էք սիրել գործելու, քան շուկաներում և փողոցներում:

Անանց փառք նրանց յիշատակին, -որոնք մայր երկրի իւրաքանչիւր քարը, խոտի շիւղը, անցած գնացածը երգել են, լացել են և թողել են որպէս աւանդ մեզ:

Վառեցէք ձեր սրտի ճրագները և կարդացէք այդ թեկուզ խաչքարերը, և այդ անլեզու քարերը այդ մամուտած արձանները. Ենչ

քաղցր, ինչ կիրուն լեզուով են խօսում սրտիդ հետ քան շատ մեծահատոր գլըքեր՝ Այդ լեզուն այդ մրմունջը չես կարող մոռանալ, քանզի մեր նախնիք են գերեզմանից խօսում: Ուրեմն այդ մրմունջները պիտի յառնեն, հայոց արժանընտիր հայրապետը իւր վեհ խօսքով պիտի գոչէ նման գրկչական խօսքի, «Ղազարէ», արի նկ արտաքսու:

Հինգերորդ՝ հայոց հայրապետին է սպանում մեր անպաշտպան և աննովիւ թեմերը, հայոց հայրապետին է սպանում ընդհանուր հայոց կարգ ու կանոնը, վտանգեալ խաղաղութիւնը եկեղեցական գասիր մէջ: Հայոց հայրապետը միայն կարող է հայոց ազգին տալ և այն միութեան օգակը Սիրունը, որը իբրև մի տիեզերական զղթայ կապում է արևադարձի պյութեալ երկրի հային և սառուցեալ երկրում վտարանդի թափառող հային Ս. Եջմիածնի կամարների հետ: Հայոց հայրապետին է սպասում մեր բազմակարօտ ժողովուրդն ըստ ամենայնի, որը ուրուիլուն այլապ ժամանակ ու կարիք չկայ:

Ո՞չ մի հայրապետ հայոց ազգի անցեալ փառքի տաճարում չէ զլացել իւր լուսան ձգել արձանը կամ գնել կիալյուն-կամ կիրափայլուն, ոմանց միայն չէ յաջողուել: Բայց քանի քանիսը իրենց դարը և իրենց ազգը այնպիսի

փայլուն կերպով են կնքել, որոնց որինակը ցայնօք կենդանի են մսացել հայեց ժողովրդի սրտի խորին ծալքերում, նրանք ապրել են ոչ միայն իրենց ժամանակի համարացյլ և ասպագայի: Յուշ լիցի ձեզ, հայեր, մի անվերջ շարք-անվերջ շարան դէմքերի և յուսաւոր դէմքերի, սկսած մեծ հայրապետ Լուսաւորչից, Ներսէսից, Սահմանից, բայց չեմ կարող չիշել այս պահուն մի անդամ գնացած դէմք միայն:

Արաբացոց տիրապետութեան ժամանակն էր, ըստ բանաստեղծի

«Կըդողար ահէն հայը անպաշտպան,

Երբ Մոհմադ ոտքը դրաւ Հայաստան»:

Հայի: Սրբան ծարաւի արաբացիք հայոց ազատասիրութիւնը պատժելու համար և վրէժինդիր լինելու համար իրենց մի ճակատամարտի կորսուի նկատմամբ, ժամանակի ամիրան-մեծ զօրբով պանդամտությ մտնել Հայաստան: Իւժուած և արնաքամ ժողովուրդը հնար չունէր, ոյժ չկար պաշտպանելու:

Ազգի այսպիսի թշուան ժամանակ՝

Յիշեց իւր հօտը Հայրապետ Սահման:

Ես կերթամ ասաց Մոհմադի դուռը Հեռացնել հայէն մահաբեր սուրը».

Սամաց և կատարեց, մի քանի ըսկերներով ճանապարհ ընկաւ դէպի այս երկրը, որով պիտի անցնէր Մոհմադ, բաղնը չփառաց անձնուէր

հայրապետին. նա Դամասկոսում ծանր հիւանդացաւ և գգալով իւր մահը, մի նամակ գրեց յանուն Մահմադի և խնդրեց իւր ձեռքում դնել մեռնելուց յետոյ, որ ինքը տայ նրան։ Լոեց Մոհմադը, որ հայոց հայրապետը վստահացել էր գալ դէպի իրեն, նա կամեցաւ տեսնել այդ խիզափի դէմքը, որը եկել էր իւր ցասումը հանդարտացնելու համար։ Հէնց որ ոտքը դրաւ սուրբի դին պարունակող սենեակի շէմքին, ըստ բանաստեղծի

«Ով հրաշք դին իւր ձեռքը կարկառեց  
Երբ նամակը տուեց,  
ինչ խնդիրը ունի քեզմէն Սահակը  
Տեղով կը պատմէ քեզ այս նամակը»,  
կարդաց Մոհմադը այս նամակը և խոր ո-  
գոց հանեց և իւր կատղած գորքը հայ երկրէն  
հանեց»։

Ուրեմն հայոց հայրապետին չի կասեցրել ոչ հուրը, ոչ առւրը, ոչ մահը—ոչ ցաւը։ Այս-  
պիսի փայլուն դէմքերով լիքն է այդ շարանը։

Այսպիսի փայլուն դէմքեր նստելով Ս. էջ-  
միածնում, կառավարելով հայոց ազգը Հայաս-  
տանի կը ժըից, Հիւսեցին իրենց հերթում եր-  
կու անման գաղափարներ իմի՝ Ս. էջմիածին  
և հայոց հայրապետութիւն։ Հայոց եկեղեցին ամենու բեր ենթարկուած է և ենթարկուում է Ս. էջմիածնին—կամ այլապէս մայր-Աթոռին, ուս-

աի և կոչւում է Շնախաթոռ և էջմիածիննա Այդտեղից են կառավարել հայոց ժողովրդին, այդտեղից են ջերմացըրել և տաքացըրել հայոց սառած արտերը, այդտեղից են ջամբուել բուլոր հրահանգները ազգային միութեան և ազ-  
գային գիտակցութեան և ինքնապաշտպանու-  
թեան։ Այդ է պատճառը, որ հայոց մայր Ա-  
թոռը շատ և շատ լեզուներով և հագար ու մի յիշպակներով է խօսում հայոց արտերի հետ, որը իւրաքանչիւր խօսքը, իւրաքանչիւր գիրը  
սրբութեամբ է ընդունուել, այդ չէ պատճառ, որ հայոց հայրապետների կոնդակ-հրահանգները  
նախ սրբազնագործ պաշտօնեան գլխի վրայ  
գրած պատում է եկեղեցում և ապա ընթեռ-  
նում իւրեւ ամենեցօւն։

Այս բոլորից յետոյ, հայեր, միթէ իրաւունք  
չունիմ ի պաշտօնէ այս ուուրը բեմից ի լուր-  
ամենեցունց ասել, աշխարհաւեր քաղաքականու-  
թիւնչէ միթէ և սիակ և տնաւեր մոլորութիւն  
չէ այն բոլոր փոքրիկ և մեծ, երեխայ և տղայ հրա-  
պարակախօսների քարոզիչների արածը, որոնք  
իրենց թայլ են տակիր յանուն փրենց համարան-  
հասկանալի ազատամտութեան խօսել և բարբա-  
ռել այն ոկզբանց գէմ, որոնց վերև թուեցի, կամ  
նոյնիսկ բնդէմ այն ծիսից և արարողութեանց,  
որոնց հայր սպառը է տեսներ ի մանկութենէ։

Սիրելի չեն միթէ ձեզ, հայեր, մեր բոլոր ծէ-

սերն ու տօները, աւանդութիւնները և կարգերը, այլ չեմ յիշում այն բարձր ու վեհ գաղափարները. քանզի կրկնում եմ, բոլորը-բոլորը հարազատ են և հայկական, բոլորը սրտիդ հետ կը խօսեն, մտքիդ հետ կը խօսեն-գերեզմաններից կը խօսեն, սիրելի շիրիմները լեզու առած կը խօսեն։ Բոլոր, բոլորը արժէքաւոր են և սուրբ, սուրբ են, քանի որ մեզ միմեանց կը զուգորդեն, անցեալիներկայիս և ապագայի միութեան պաշտպանութեան անջինջ գծերն են։ Արտաքոյ քան այս մեծ մեծ գաղափարներ, մեծմեծ սկզբունքներ ամէն ինչ օտար են հայի համար։

Փորձիր ձեռք տալ ազգային ծառի ամէն մի թելին, ամեն մի շիւղին, կը թափթփէ նա իւր ազազուն տերևները և հողմերը կը տաճեն նրանց դէպի կորստեան գուբը։ Ուրեմն զգուշացէք, հայեր։


Յուշ լիցի ձեզ փոթորկից և կարկաից ազատուղ, մահուան տագնապից ազատուղ իւր փրկիչ ծառինիներքոյ ճընճղկան պատմութիւնը։

Ծիտը փոթորկի ժամանակ իւր կեանքը բաց օդում վերստին ստացաւ ի շնորհս հովտի մէջ տնկուած ծառի, ապաւինելով նրան։ Ինչպէս յայտնեց այդ խեղճ կենդանին իւր շնորհակալիքը. նա բուն շինեց, ձու ածեց այդ ծառի ճըդների վրայ, իւր սէրը և սիրտը փրկիչ ծառի

ձղների վրայ դրաւ և իւր երգը, իւր քաղցր ձայնը այդտեղ ասեց, իւր ուրախութիւնը իւր շնորհքն այդպէս արեց, զի աւելի ոչինչ ունէր և ոչինչ կարող էր։ Հայեր, ս. էջմիածինը իւր մայր աթոռով, իւր հայրապետութեամբ, այդ փրկիչ ծառն է, որ մեզ բոլոր փոթորիկներից ազատել է, բոլոր խորշակներից պահպանել է։ Երախտագիտութիւն ունենանք, մենք ևս մեր սիրտը, մեր սէրը, մեր երգը և շնորհքը տանք ս. էջմիածնին և նրա հայրապետին։ Տանք, քանի որ երախտագիտութիւնը շնորհքներից ամենասիրելին և ամենազեղցիկն է։ Ս. էջմիածնի և մեր նոր հայրապետի անունները տարէք տնկեցէք ձեր որդոց սրտերում, տարէք և յայտնեցէք այս աշխարհանդէս տօնի մասին ձեր բոլոր զաւակաց, ձեր ազգականաց, որոնք հնար չունեն այս պահուն այստեղ լինելու, փառաւոր տաճարիս համեստ կամարները նեղ և անձուկ են ուխտաւոր և հարազատ ժողովրդի համար, բայց սիրում է հայոց տունը, հայոց հայրապետին, հայոց բեմը. փառք այդ ժողովրդին, փառք ձեզ։

Հայոց հայրապետը—այնտեղ ս. էջմիածնի կամարների տակ կաղօթէ, հայոց ժողովուրդը—ուխտաւոր ժողովուրդը նոյնպէս կաղօթէ, ոյժ

կը խնդրէ կուսաւորչի, Ներսիսի, Սահակի և  
Մեսրովի Աստուծուց, որ զօրավիդ լինի մեր ար-  
ժան ընտիր հայրապետին, հովանաւոր լինի մայր  
աթոռին — ո. Եջմիածնին. մենք ևս, հայեր, եղ-  
բարք սիրեցեալք, միանանք այդ աղօթից և  
զգացմանց, խառնենք մեր ներքին յոյզերը այդ  
յորդահոս յուզմանց գետին և մաղթենք ըստ  
մեր խնկելի նախահարց մըմունջներին. ով Տէր, —  
«բարեխօսութեամբ վերին Քո զօրաց միշտ  
անշարժ պահեա զաթոռ Հայկազնեայց», հօտով,  
հօտապետով — յամերամ ժամանակօք յաւիտեանս  
յաւիտենից — ամէն:




## «Ազգային գրադարան»



NL0170832

ԻՐ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆԵՐԸ

- 1) Խաչատուր Արովեանի կեանքը  
սպառուած. 60 լ.
- 2) Յարութիւն մարդկան—երկրորդ  
տպագր. (արժանացած Սահակ  
Մեսրովբեան մրցանակին) — սա-  
կաւաթիւ 10 լ.
- 3) Հայի Լուսաւորիչը — սակաւաթիւ 10 լ.
- 4) Ատենախօսութիւն 10 լ.



Դիմել հեղինակին

Բակу.

Свящ. Нерсесу Теръ-Карапетянцъ

*կամ*  
Թիֆլիզ Կենտրոնական գրավաճառանոցին.